community

The New Apostolic Church around the world

03/2026/EN

Մեկ եկեղեցի, մեկ ոգի, նոր ղեկավարություն

Խմբագրական
Երկրի վրա շունչ երկնքից

Ժամերգություն
Մանանեխի հատիկ – փոքր հավատ, մեծ ներգործություն

Վարդապետություն
Սուրբ Հաղորդությունը պատարագի կենտրոնն է

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Երկրի վրա շունչ երկնքից

Ժամերգություն

4 Մանանեխի հատիկ – փոքր հավատ, մեծ ներգործություն

Մանկական անկյուն

10 Հովսեփն ու նրա եղբայրները

12 Այցելություն Մարկոյին՝ Էրիում / ԱՄՆ/

Վարդապետություն

14 Սուրբ Հաղորդությունը պատարագի կենտրոնն է

Ընդհանուր լուրեր

18 Մեկ եկեղեցի, մեկ ոգի, նոր ղեկավարություն

■ Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Հարավային Աֆրիկայի ՆԱԵ
■ Շապիկի ետևի լուսանկարը՝ ՄՆԱ Ուրուգվայ

Երկրի վրա շունչ երկնքից

Լուսանկարը՝ ՄՆԱԵ

Սիրելի եղբայրներ և քույրեր,

ընդամենը մի քանի շաբաթ է անցել, ինչ ես ձեռնադրվել եմ գլխավոր առաքյալ: Ես ի սրտե շնորհակալ եմ ձեզ՝ ձեր աղոթքների, աջակցության, ինչպես նաև սիրալիր խոսքերի և ողջույնների համար: Վստահ եղեք, որ ես աղոթում եմ ձեզ բոլորիդ համար:

Այս Հոգեգալուստը ևս ավելի մեծ նշանակություն ունեցավ մեզ համար, քան եկեղեցու ղեկավարի փոփոխությունը: Կենտրոնում Սուրբ Հոգով լցվելու հիշատակումն էր և այն ամենի, ինչ նա է անում: Այն մեր հայացքը ուղղում է Հիսուս Քրիստոսի վրա-դրանով և՝ ճշմարտության վրա, որը մեզ տալիս է աջակցություն և նվիրում է կողմնորոշում:

Հիսուսով մենք ճանաչում ենք, թե ով է Աստված մեզ համար,՝ նա ոչ թե հեռու է, ոչ թե լռող է, ոչ թե անտարբեր է, այլ մի Աստված է, ով գալիս է, ով ցածրանում է և մարդանում, որպեսզի մեր կողքին լինի:Նա կիսում է մեր կյանքը և մեր տառապանքները, և այնտեղ, որտեղ տիրում է ատելություն, ուժ և արհամարհանք, նա պատասխանում է սիրով՝ ,, Հայր, ներիր նրանց,,:

Ով այդպես է նայում Քրիստոսին, նրան է վերաբերում այս տարվա կարգախոսը՝,, Մի վախեցիր, այլ միայն հավատա,,: Մի ժամանակաշրջանում, երբ շատ մարդիկ անվստահ, մտահոգված և վախեցած են, դա Միսիթարչի աստվածային պատասխանն է, քանզի կատարյալ սերը պտուղ է տալիս: Թող Քրիստոսի սերը պարուրի մեր սրտերը, որպեսզի վախը կորցնի իր ուժը:

Դու սիրված ես Աստծո կողմից, ցանկալի և անսահման արժեքավոր այնպես, ինչպես քո մերձավորը:

Հոգեգալուստը նվիրում է սրտի լեզուն, մի լեզու, որը միավորում է, ուղղորդում և խաղաղություն բերում: Որտեղ այդ լեզվով են խոսում, այնտեղ ինչ-որ բան է սկսվում արդեն երկրի վրա երկնքից:Սրտով ձեզ միացած
Ձեր՝

Հելգե Մուչլեր

Մանանեխի հատիկ – փոքր հավատ, մեծ ներգործություն

Լուսանկարները՝ ՆԱԵ Արևմտյան Գերմանիա

Ժամերգություն Լինդլարում / Գերմանիա/ 2026-ի փետրվարի 1-ին այն ժամանակվա գլխավոր առաքյալի օգնական Հելգե Մուչլերի հետ

Ղուկաս 17, 5-6

Եվ առաքյալները Տիրոջն ասացին.,, Ավելացրու մեր հավատը,,: Եվ Տերն ասաց. ,, Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք և այս թթենուն ասեք՝ ,, Արմատախիլ եղիր և տնկվիր ծովի մեջ, նա իսկ կհնազանդվի ձեզ,,:

շատ ծեր քույր-եղբայրների համար: Հին ծառը չեն վերատնկում, լինի դա թթենի կամ թզենի, որը Հիսուսը ցույց էր տվել այն պահին, երբ խոսում էր աշակերտների հետ:

Թզենին բավականին տգեղ կարկաս ունի, տգեղ կարկաս՝ շատ խոր արմատներով: Թթենու կամ թզենու արմատներն այնքան խորն են, որ դրանց իսկապես անհնար է վերատնկել: Գուցե դա հնարավոր լինի հսկայական մասնագիտացված մեքենաների միջոցով, սա կարելի է նմանեցնել մի պատկերի, կարծես Տեր Հիսուսը իր աշակերտների հետ կանգնած է ,,Էմփայր սթեյթ,, կառույցի կողքին և նրանց ասում է. ,,Եթե դուք մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, ապա կարող եք այս ,,Էմփայր սթեյթ,, կառույցին ասել, վեր բարձրացիր քո տեղից և վերակառուցվիր Հադսըն գետում:

Աստվածաշնչյան խոսքը մեկ այլ զգացում է արտահայտում՝ կյանքի զգացում: Թզենու արմատախիլ անելու և վերատնկելու մտքերը կյանքի զգացում է առաջացնում առ այն, որ կա մի ուժ, որը սահմանների վրայով է անցնում, որտեղ անհնարինը դառնում է հնարավոր, որտեղ թեթևություն է, ուրախություն, ինչ-որ այլ բան, որի մասին խոսում է Հիսուս Քրիստոսը:

Պետք է ուշադրություն դարձնել համատեքստին՝ ի՞նչ համատեքստում է աստվածաշնչյան այս խոսքը: Կարևոր են դրանից առաջ գրված չորս տողերը՝ Ղուկաս 17, տող 1-4: Հիսուսը խոսում է իր աշակերտների հետ և վկայակոչում է այն մասին, որ լինելու են գայթակղություններ, հարձակումներ դրսից՝ Դուք գայթակղվելու եք մեղք գործելու: Ձեզ գայթակղելու են դա անել, որի պատճառով միշտ շեղվում են ճիշտ հավատից: Բայց ավելի վատն այն է, որ հարձակումներ են լինելու ներսից: Դուք ձեր մեջ հակասություններ եք ունենալու: Վեճեր կլինեն: Հավաբանար կլինեն և վիրավորանքներ:

Երբ քո եղբայրը կամ քո քույրը գա և զղջա, որ քեզ վիրավորել է, ապա ներիր նրան: Սակայն, ինչքա՞ն հաճախ պետք է ներել: Դա այնքան էլ հեշտ չէ: Այո,- ասում է Հիսուսը, -դա հեշտ չէ: Սակայն, դուք պետք է յոթ անգամ ներեք: Ամեն օր ներեք: Յոթը նշանակում է բազմաթիվ: Դրանով Հիսուսը չի ասում, որ դուք պետք է մինչև յոթ անգամ ներեք, իսկ եթե ութերորդ անգամ գա, ասեք, որ այլևս չեք ներում: Սրանով նա դա ի նկատի չունի, այլ՝ բազմաթիվ անգամներ: Հիսուսն ասում է, որ դու պետք է միշտ ներես, միշտ ներելու պատրաստակամ լինես:

Մենք գիտենք, թե ինչ դժվար է դա, երբեմն անհնար է լինում ներելը: Մենք կարող ենք հասկանալ, որ աշակերտները Հիսուսին ասում են՝ Տեր, դա դժվար է, դա անհնար է: Խնդրում եմ, ուժեղացրու մեր հավատը, որպեսզի մենք կարողանանք դա անել: Այո աշակերտները ,, ուժեղացրու մեր հավատը,, նախադասությունն ասելով նկատի ունեն այն, որ կարիք ունեն ուժեղ հավատի: Մենք կարիք ունեք ավելի լավ հավատի: Մենք կարիք ունենք գերազանց հավատի, որ կարողանանք ավելի լավ աղոթել, որ ավելի շատ խթանող ուժ ունենանք մեր հավատի համար:

Ծանոթ ե՞ս այս զգացումին, այս ցանկությանը՝ ախ, Աստված եթե ունենայի ավելի մեծ հավատ, կկարողանայի ավելի լավ աղոթել, կկարողանայի ժամերգության ժամանակ ավելի լավ ընդունել Աստծո խոսքը, կկարողանայի ամենի ինչն ավելի լավ, ավելի ուժեղ և ավելի զորեղ անել: Հետո կկարողանայի վանել հիվանդությունները, կկարողանայի ավելի լավ գործել կյանքի իմ ունեցած տվյալ իրավիճակում, կկարողանայի այս երկրի վրա հարաբերություններն ավելի լավ ձևավորել: Ինձ համար ավելի հեշտ կլիներ:

> Որոշիչն այն չէ, որ դու մեծ հավատ ունես: Որոշիչն այն է, որ դու մեծ Աստծո հանդեպ փոքր հավատ ունես:

Ախ, երանի լինեի հավատցյալ հին հերոսներին նման, ինչպիսին Մովսեսն էր: Իսրայելի ժողովուրդը տեղահանվել էր, փախել Եգիպտոսից: Իսկ հետո նրանք հասել էին մի տեղ, երբ առջևում Կարմիր ծովն էր, իսկ հետևում՝ եգիպտական զորքը, որն առևանգել էր Իսրայելի ժողովրդին: Նրանք հորիզոնում տեսնում էին կառքերը և ցանկանում էին վերադառնալ եգիպտական գերություն: Ապա գալիս է Մովսեսը, հավատքի այդ հերոսը, և ասում՝ Մի վախեցեք, Տերը ձեզ համար կպայքարի: Երանի ես էլ կարողանայի հավատի այնպիսի հերոս լինել, ինչպիսին Մովսեսն էր: Այս աշխարհի համար, որտեղ մենք ենք ապրում, տիպիկ է՝ միշտ ավելի ուժեղ, միշտ ավելի ազդեցիկ: Ես պետք է պայքարեմ:

Ահա թե ինչի մասին է այս խոսքը՝ անցնել մեզ հայտնի սահմանները: Այն նոր թեթևության, նոր տեսակի հարաբերությունների մասին է:

Ես պետք է կանգնեմ հաղթողի պատվանդանին, առաջին տեղում: Որովհետև թույլերը ոչ մի արժեք չունեն: Թույլը, ով ամենահետևում է, ում մաքրող մեքենան տանում է իր հետ , մոռացված է, ոչ մի արժեք չունի: Դու պետք է պայքարես քո ճանապարհը հարթելու համար: Իսկ անհրաժեշտության դեպքում պետք է օգտագործես քո արմունկները, ցույց տաս քո ուժը և պայքարես քո ճանապարհը հարթելու համար: Սա այնքան տիպիկ է նաև հավատքի համար: Եվ հենց այս իրավիճակում է, որ Հիսուսը դառնում է հավատքի մասին պատկերացումներին և ասում՝ Եթե դուք ունենայիք մանանեխի հատիկի չափ հավատք...

Ես գյուղատնտեսության մասնագետ չեմ, բայց լսել եմ, որ մանանեխի սերմերը այդ ժամանակներում հայտնի ամենափոքր սերմերն էին: Յոթ հարյուր սերմը կազմում է մեկ գրամ: Լավ ակնոցներ են պետք նույնիսկ այդքան փոքրիկ մանանեխի սերմը աչքով տեսնելու համար: Եթե դուք մանանեխի սերմի չափ հավատք ունենայիք... Նույնիսկ քո ամենափոքր հավատքը, քո գրեթե կոտրված հավատքը, հաշվվում է Տեր Հիսուս Քրիստոսի աչքերում: Կարևոր չէ, որ դու մեծ հավատք ունենաս: Կարևորն այն է, որ դու նույնիսկ փոքր հավատք ունենաս մեծ Աստծո հանդեպ: Եթե դու նույնիսկ փոքր հավատք ունես մեծ Աստծո հանդեպ, ապա կարող ես ծառեր արմատախիլ անել: Բայց դու կարող ես արմատախիլ անել ծառերը ոչ թե այն պատճառով, որ դու այդքան ուժեղ և այդքան մեծ ես, այլ որովհետև Հիսուս Քրիստոսը մեծ է քեզանում, որովհետև Հիսուս Քրիստոսը հզոր է թույլերի մեջ:

Մանանեխի հատիկի չափ հավատքը իսկական հավատքի մասին է: Իսկական հավատքի, այն հավատքի, որն իսկապես կարևոր է: Մեր տարվա կարգախոսն է՝ ,, Մի՛ վախեցիր, միայն հավատա,,: Այո, բայց ի՞նչ է նշանակում այս «միայն հավատա»-խոսքը: Այս «միայն հավատա»-խոսքը պարզ, իսկական հավատքի , մանանեխի հատիկի չափ հավատքի մասին է: Հավատք, որը չի ապավինում սեփական ուժերին: Ես ուժեղ եմ, կամ պետք է ուժեղ լինեմ: Բայց ի՞նչ անել, եթե ես ուժեղ չեմ: Այս իսկական հավատքը, այս մանանեխի հատիկի չափ

հավատը պարզ և խոնարհաբար վստահում է Տեր Հիսուսին:

Այս ճշմարիտ հավատքը, այս պարզ հավատքը, հավատացյալ լինելը այս իմաստով նշանակում է հավատալ Տեր Հիսուսին: Հավատալ, որ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, մարդացավ: Հավատալ, որ նա ապրել և գործել է այս երկրի վրա, որ սրանք խորհրդանիշներ չեն, սիրուն, գեղեցիկ պատմություններ չեն, այլ՝ պատմության մեջ իրական իրադարձություններ: Իսկական հավատքը նշանակում է հավատալ, որ այս Տեր Հիսուս Քրիստոսը խաչվեց, որպեսզի լինի այնտեղ, որտեղ մենք ենք, որպեսզի մենք լսենք նրա անվերապահ «ոչ»-ը մեղքին, բայց լսենք նրա «այո»-ն քեզ և ինձ՝ որպես մեղավորների, որպեսզի մենք զգանք, որպեսզի հասկանանք, որ նա մեզ հետ է մեր մեղքի մեջ, նույնիսկ մեր մահվան մեջ: Այս ճշմարիտ հավատքը հավատում է այն բանին, որ նա մահացել է խաչի վրա: Այս ճշմարիտ, պարզ հավատքը հավատում է, որ նա հարություն է առել երրորդ օրը, որ մահը չէր կարող ետ պահել նրան: Իսկական հավատքը հավատում է, որ նա համբարձվել է երկինք, նստած է Աստծո աջ կողմում, ամեն ինչ պահում է իր ձեռքերում և այնտեղից վերադառնալու է:

Այս ճշմարիտ հավատքը, այս մանանեխի հատիկի չափ հավատքը, համեստ, պարզ և անպաճույճ հավատք է, որն անհրաժեշտություն չի զգում հուսահատորեն և համառորեն պայքարելու իր սեփական ուժերով, այլ՝ դա պարզ, համեստ և անպաճույճ հավատք է, որը զգացնել է տալիս է: Հիմա եկեք սա գործի վերածենք: Ի՞նչ է դա նշանակում:

Թեմա առաջին՝ տառապանք: Վերջերս լսեցի մի դեպքի մասին, երբ ամեն ինչ արդեն բավականաչափ վատ էր՝ ծերություն գումարած լուրջ հիվանդություն: Ապա, դրան գումարվում է նաև մի սարսափելի ախտորոշում: Երբեմն մտածում ես. «Այո՛, հիմա պետք է ես հատկապես ծնկի իջնեմ, և մենք պետք է կարողանանք աղոթքով վերացնել այս խնդիրը»: Մենք պարզապես պետք է ճիշտ հավատանք: Բայց ի՞նչ անել, եթե դա չի գործում: Ա՜խ, ես մաղթում եմ քեզ, քույր, եղբայր, որ տուժել ես սրանից և գտնվում ես տառապանքի մեջ, որ չնայած բազմաթիվ կասկածներին՝ կարողանաս նույնիսկ մի փոքր վստահել քո Տեր Հիսուս Քրիստոսին: Ես ցանկանում եմ քեզ, որ գուցե այս ժամերգության ժամանակ կամ այսօր ետկեսօրեին, հաջորդ շաբաթ, լույսի փոքրիկ շողեր գան Աստծուց քեզ՝ քո տառապանքի մեջ, երբ դու կարող ես զգալ, երբ դու կարող ես ապրել այն պահը, որը հանգստություն կբերի քեզ և դու կասես՝

Ես այս սարսափելի իրավիճակում եմ, գուցե երբեք էլ չապաքինվեմ, բայց զգում եմ, որ տեսնում եմ հույսի փոքրիկ շող: Ես զգում եմ, որ այս մեծ Աստվածը աշխատում է բերելու այն օրը, երբ այլևս տառապանք, լաց, ցավ, արցունքներ և մահ չի լինի: Ոչինչ, որ կասկածում ես: Գուցե կարող ես մի փոքր ավել հավատալ: Դա բավական է: Հավատքի այս փոքրիկ, այս չնչին մասը, հավատքի այս պահերը շատ-շատ կարևոր են քո Փրկչի և Տեր Հիսուս Քրիստոսի աչքերում:

Թեմա երրորդ՝ Մեր մեղքը: Մեղքը արմատ է գցել: Մենք հաճախ ավելի լավ գիտենք ինքներս մեր մասին, թե որն է մեր սիրելի մեղքը ,և երբ անընդհատ մտածում ենք, թե ինչո՞ւ ենք՝ կրկին ընկել այդ թակարդը: Այսպիսով, սիրելի՜ Աստված, հիմա, այս ժամերգությունից հետո, ես իսկապես ուժերս հավաքելու եմ և ամբողջությամբ արմատախիլ եմ անելու այն, և ես հաջողության եմ հասնելու: Բայց դու հասկանում ես, որ չես կարողանում քո սեփական ուժերով հաջողության հասնել: Անհրաժեշտ է մանանեխի հատիկի չափ հավատքը, այն պարզ հավատքը, որը պարզապես վստահում է այն բանին, որ Հիսուս Քրիստոսը խաչի վրա ասում է Հորը՝ Հայր, ներիր նրանց: Եվ որ այս Հիսուս Քրիստոսը խաչի վրա նայում է քեզ և ասում՝ Ես հաղթահարել եմ և ես ուզում եմ քո ձեռքը բռնել: Կփորձե՞ս նորից ինձ հետ: Ես հաղթել եմ աշխարհին, մեղքը: Արի քո փոքր, անկեղծ, պարզ մանանեխի հատիկի չափ հավատքով, որը միայն իմ ձեռքն է ընկնում, և կտեսնես, որ այդ ժամանակ միասին մենք կգտնենք այս մեղքի փոսից դուրս գալու ճանապարհը :

Չորրորդ թեմա՝ Ներում: Մեր սրտերում փորագրված են այլ մարդկանց պատկերները: Այս գործընկերը, այս ուսանողուհին, այս հարևանը: Ինչ էլ որ լինի՝ մենք ճանաչում ենք նրանց, մենք ճանաչում ենք նրան, մենք ճանաչում ենք մեր տատիկ-պապիկներին, մեր ծնողներին, խնձորը ծառից հեռու չի ընկնում, նրանք բոլորն էլ այդպիսին են, ոչինչ չես կարող անել դրա դեմ, պարզապես այդպիսին են նրանք: Հետո նա վիրավորում է քեզ, և բացարձակապես անհնար է ստեղծել ներման կամ հաշտեցման իրավիճակ: Եվ հետո ի՞նչ: Այո, այո, ես զգացել եմ դա վերջերս ժամերգությունից հետո: Հավատացյալ մի եղբայր կամ հավատացյալ մի քույր վիրավորել է քեզ շատ, շատ տարիներ առաջ: Հետո ժամերգության ժամանակ խոսքը գնում է ներման մասին, բայց ոչ մեր սեփական ուժերից բխող ներման մասին՝ ես կարող եմ դա անել հիմա: Նույն թեման է՝ մանանեխի հատիկի չափ հավատի: Թույլ տանք մեզ ապավինելու Հիսուս Քրիստոսին՝ վստահելով նրան, որպեսզի նա մեր ձեռքը բռնի և մեր սրտերում ստեղծի այլ պատկեր, որ մեր սրտերում

մեր մերձավորի մասին այլ պատկեր ծաղկել տա: Երկուսն էլ հաշտվեցին ժամերգությունից հետո: Ես լսեցի նրանց պատմությունը, ըստ որի դա բացարձակապես անհնար էր թվում նանց պարագայում:

Եվ ես գիտեմ, որ ներման թեման շատ դժվար է: Երբեմն այնպիսի սարսափելի բաներ են արվել: Ներումը կարող է լինել ողջ կյանքի ջանք, կամ մի բան, որը պարզապես հնարավոր չէ այս կյանքում: Դա հասկանալի է: Բայց ուղերձն այն է, որ չլինես այդքան կոշտ, այլ թույլ տաս ինքդ քեզ ,,ընկնելու Հիսուս Քրիստոսի ձեռքը,, և դու անպայման կտեսնես, որ նույնիսկ քո մերձավորի դեպքում, ով քո հանդեպ կարող է սարսափելի բաներ արած լինել, գուցե անհնարինը դառնա հնարավոր՝ ո՞վ գիտի: Ահա թե ինչի մասին է այս խոսքը՝ մեզ հայտնի սահմանները հաղթահարելու մասին, նոր թեթևության, նոր հարաբերության մասին:

Հաջորդ թեման՝ Մեր հասարակության մեջ տիրող իրավիճակը և դրա պատճառով մեր զգացած վախը: Ամենուրեք շոշափելի է այն, ինչ կատարվում է վերջին չորս կամ հինգ տարիների ընթացքում: Այնքան շատ վախ կա: Այնքան շատ վախ է առաջացել և խոր արմատներ գցել մարդկանց սրտերում: Ես մաղթում եմ մեզ բոլորիս, իսկ դա գրեթե անհնար է թվում՝ հաշվի առնելով մեր ապրած իրականությունը, որ մենք կարողանանք, այնուամենայնիվ, չակերտների մեջ, ընկնել մեր սիրելի Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքը, որ ժամանակ առ ժամանակ գան մանանեխի հատիկի չափ հավատքի պահեր, երբ կզգանք, որ կյանքը շարունակվում է: Ամեն ինչ Աստծո ձեռքերում է: Նա իր ձեռքում է պահում աշխարհի բոլոր իրադարձությունները, և ամեն ինչ չէ, որ դժոխք կգնա, և ամեն ինչ չի ավարտվի լիակատար խավարով: Տեր Հիսուսը կգա և մեզ վերաբերող մեծ բաներ կլինեն ապագայում: Ես մաղթում եմ մեզ, որ նման փոքր պահերը, այս հույսը և այս լույսը շարունակեն ծագել մեր մեջ:

Հաջորդ թեման՝ Առաքելություն: Մենք տեսնում ենք մեր համայնքներում առկա իրականությունը, ավելի ու ավելի դատարկ մնացող եկեղեցու նստարանները և հասարակության հեռացունը քրիստոնեությունից: Սակայն, Հիսուսն ասում է. «Այո՛, բայց գնացեք և տարածեք հավատքը, մկրտեք և սովորեցրեք»: Եվ մենք կարծում ենք, որ դա անհնար է, բացարձակապես անհնար: Դուք չեք կարող այս մարդկանց, այս թթենիները վերատնկել: Դա անհնար է: Անհեթեթություն: Եկեք պարզապես ,,ընկնենք Հիսուս Քրիստոսի ձեռքը,, և կատարենք մեր առաքելությունը: Եկեք կրկին ու կրկին կապված լինենք նրա հետ, որքան հնարավոր է լավ, մեր պարզ, խոնարհ, անպաճույճ հավատքով, և անենք այն, ինչ կարող ենք՝ բարության փոքր արարքներ, ծաղկման փոքր պահեր, փոքր բարի գործեր, մեր մերձավորների համար փոքր աղոթքներ և այլն:

Վերջին թեման՝ Մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը: Մենք ասում ենք, որ մեր հասկացողությամբ դա անհնար է թվում: Որոշ եղբայրներ և քույրեր, այստեղ պետք է նաև հաշվի առնենք մեր եկեղեցու պատմությունը, վախ են զգում այս մտքից: Ա՛խ, ես այնքան եմ ցանկանում, որ մենք Տեր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստին չվերաբերենք վախով, այլ մեր մեջ աճող ուրախությամբ: Այո՛, մեր հասկացողությամբ դա բացարձակապես անհնար է: Ինչպե՞ս պետք է պատկերացնենք դա: Տեր Հիսուսը գալիս է, Խաղաղության Թագավորությունը և Հարությունը՝ այս ամենն այնքան անհայտ, այնքան անհասկանալի՝ է: Բայց գուցե կարող ենք ասել՝ Սիրելի՛ Տեր Հիսուս, ես դժվարությամբ եմ հավատում դրան: Երբեմն ես մեծ կասկածներ եմ ունենում, իսկ երբեմն՝ վախենում եմ: Բայց ես պարզապես ինձ թույլ եմ տալիս, որ ,,ընկնեմ քո ձեռքերի մեջ,,: Այդ ժամանակ կգա այն օրը, երբ մենք այլևս հարցեր չենք ունենա, քանի որ կտեսնենք նրան այնպիսին, ինչպիսին նա կա: Տեր Հիսուսը, այդպես եմ զգում ես, պարզապես ուզում է այս առավոտյան մեր սրտերում խորը դնել այս հորդորը՝ Մի՛ պայքարեք, մի՛ լարվեք: Հույսն այդքան շատ մի դրեք ձեր սեփական ուժերի վրա: Ավելի շատ վստահեք իմ ուժին: Ես եմ ուժը: Ես եմ ապագան: Ես եմ կյանքը: Ես եմ հարությունը: Ես եմ լույսը, հույսը և ապագան: Դու կարող ես պարզապես թույլ տալ, որ ընկնես իմ ձեռքերի մեջ, և այդ դեպքում կարող ես լեռներ տեղաշարժել:

Հիմնական մտքեր

Հիսուս Քրիստոսի հանդեպ մի մանանեխի հատիկի չափ հավատքը բավարար է, քանի որ կարևորը մեր ուժը չէ, այլ՝Աստծո գործը մեր ներսում: Հատկապես տառապանքի, մեղքի, վախի և հակամարտության պահերին Հիսուսը հրավիրում է մեզ թողնել ամեն ինչ և վստահել իրեն: Նրանք, ովքեր հանձնվում են նրա ձեռքը, զգում են հույս, ներում և հնարավորություն, որ նույնիսկ անհնարինը դառնա հնարավոր:

ՀՈՎՍԵՓՆ ՈՒ ԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

ԸՍՏ ՍՈՎՍԵՍ 1-ԻՆԻ 37, 39-41 և 45-47-Ի

Հովսեփն ուներ տասնմեկ եղբայր: Իրենց հայր Հակոբը առանձնապես շատ էր սիրում Հովսեփին և նրան նվիրում է ծաղկազարդ մի պատմուճան: Եղբայրները նախանձում են:

Մի գիշեր Հովսեփը երկու երազ է տեսնում: Երկուսում էլ կենտրոնում ինքն էր և մեծարվում էր: Երբ նա այդ մասին պատմում է իր եղբայրներին, նրանք ավելի են նախանձում նրան և շատ են զայրանում: Նրանք այլևս նրան ոչ մի սիրալիր խոսք չեն ասում:

Որոշ ժամանակ անց եղբայրները գնում են հեռու և արածեցնում են իրենց ոչխարներին: Հայրը ուղարկում է Հովսեփին, որպեսզի նրանցից լուր բերի:

Երբ եղբայրները տեսնում են նրան դեպի իրենց գալիս, չար բան են պլանավորում: Նրանք հանում են Հովսեփի պատմուճանը և նրան նետում են մի խոր փոսի մեջ:

Դրանից կարճ ժամանակ անց մի քարավան է անցնում այդ կողմերով:

Եղբայրները Հովսեփին քսան արծաթադրամով վաճառում են Եգիպտոս մեկնող վաճառականներին, որից հետո նրանք իրենց հորը պատմում են, թե մի վայրի գազան Հովսեփին կերել է: Հակոբը շատ է տխրում և շատ երկար ժամանակ լաց է լինում:

Եգիտպոսում Հովսեփի համար շատ դժվար էր: Նա անգամ բանտ է ընկնում, թեև ոչ մի սխալ բան չէր արել: Չնայած դրան՝ Հովսեփը ամուր հավատ ուներ Աստծո հանդեպ: Եվ Աստված նրան միայնակ չի թողնում: Որոշ ժամանակ անց փարավոնը լսում է Հովսեփի խելացիության և այն մասին, որ Աստված օգնում է նրան՝ մեկնաբանելու երազները:



Փարավոնը ազատ է արձակում Հովսեփին և դարձնում իր երկրի երկրորդ մեծ մարդը: Հովսեփը հոգում է այն մասին, որ վատ տարիների համար բավարար չափով հացահատիկ հավաքվի: Երբ սովի դժվար տարիները սկսվեցին, Եգիպտոսում բավարար քանակի հացահատիկ կար, այնքան շատ, որ անգամ այլ երկրներից մարդիկ էին գալիս , որպեսզի հացահատիկ գնեն: Այդ նպատակով մի օր էլ Եգիպտոս են գալիս Հովսեփի եղբայրները: Երբ որոշ ժամանակ անց նա ճանաչում է նրանց, գովաբանում է Աստծուն, քանի որ Աստված ամեն ինչ լավ է անում: Հովսեփը ներում է իր եղբայրներին նրանց արարքի համար:

Փարավոնի հրավերով Հովսեփը կարողանում է ողջ ընտանիքին Եգիպտոս տեղափոխել և այդ դժվար ժամանակներում հոգալ նրանց համար:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԿՈՅԻՆ՝ ԷՐԻՈՒՄ / ԱՄՆ/

Ողջույն,
իմ անունը
Մարկո է: Ես տասնմեկ
տարեկան եմ և իմ ընտանիքի հետ
ապրում եմ Էրի քաղաքում: Էրին գտնվում է
ԱՄՆ-ի Փենսիլվանիա նահանգի հյուսիս-արևմտյան
մասում: Ծովի մյուս կողմում է գտնվում Կանադան:

Արդեն երեք տարի է,
ինչ մենք ապրում ենք
այստեղ: Դրանից առաջ
մենք ապրում էինք
Բուրունդիում: Բուրունդին մի փոքր երկիր է Արևելյան
Աֆրիկայում, շատ հեռու Էրիից- շուրջ 13000 կիլոմետր:
Պատկերացրեք, դուք մեկնում եք Գերմանիայով վերևից
մինչև ներքև, այսինքն՝ Ֆլենսբուրգից մինչև Ֆյուսսեն: Եվ
նույն ճանապարհը յոթ անգամ գնում գալիս եք: Այդքան
հեռու է մեր քաղաքը:

Իմ ընտանիքը մեծ է: Իմ ծնողներն ունեն ինը երեխա,
այսպես՝ ես ունեմ չորս քույր և չորս եղբայր: Ես
չորրորդ երեխան եմ և միաժամանակ
իմ ծնողների ավագ որդին: Իմ կրտսեր
եղբայրը դեռ շատ փոքր է: Հայրս
աշխատում է ռեստորանում, մայրս հոգ
է տանում մեզ՝ երեխաներիս համար:
Նկարում դուք տեսնում եք ինձ իմ
կրտսեր եղբայրներ Քրիստոֆերի,
Ռոմեինի և Քրիստիանի հետ:
Իմ եղբայրները և ես կազմում ենք
մի լավ թիմ: Մենք հաճախ ենք
միասին մի բան նախաձեռնում,
օրինակ, հաճույքով գնում ենք
թատրոն:

Լուսանկարները վանավոր՝ stock.adobe: petrrgoskov/maramorosz/Marina Zlochin/ Kovacs/natrocfort

Ես երաժշտություն եմ սիրում: Ես սովորում եմ ջութակ և հարվածային գործիքներ նվագել: Այստեղ նվագում եմ հարվածային գործիքի վրա գարնանային մի համերգի ժամանակ:

Ի դեպ՝ Բուրունդին հայտնի է իր թմբկահարների խմբերով, ովքեր նվագում են մեծ ու հնչեղ թմբուկների վրա: Հավանաբար այդ պատճառով է, որ իմ եղբայրները և ես սիրում ենք հարվածային գործիքներ:

Բայց ես միայն երաժշտությամբ չեմ զբաղվում: Իմ ազատ ժամանակ խաղում եմ նաև ֆուտբոլ:.

Կիրակի օրերը հաճույքով գնում եմ եկեղեցի: Կիրակնօրյա դպրոցում ես շատ ընկերներ ունեմ: Ամռանը մենք բոլորս հաճախ ենք լինում Էրի ծովի լողափին: Այնտեղ մենք լավ ժամանակ ենք անցկացնում:

Խաղալուց հետո քաղց ենք զգում: ԱՄՆ-ում ես ունեմ երկու նոր սիրելի ուտեստ՝ պիցցան և պանրով մակարոնը: Տանը իմ ծնողները հաճախ ուտեստներ են պատրաստում Բուրունդիի խոհանոցից- ավելի շատ լոբով: Դրանք ինձ համար միշտ համեղ են: Հըըմմ:

Աղբյուրը՝ Նորաստեղծական ամսագիր- Երեխաների ամսագիր, հրատարակություն 03,2026

Պատկերները՝ Mariya/stock.adobe

Սուրբ Հաղորդությունը պատարագի կենտրոն

Այն, ինչ հնչում է ամրագրված խոսքերով, իրականում ապրված հավատ է՝ պատարագը կարգուկանոնը կապում է Աստծո մոտիկության հետ: Իսկ կենտրոնում Սուրբ Հաղորդությունն է - ուսուցողական շարադրանք, որը վերաբերում է ձևերին, ժեստերին և դրանց իմաստին:

«Պատարագ» տերմինը, որը ծագում է հին հունարեն leiturgeia («հանրային ծառայություն») բառից, վերաբերում է պաշտամունքի սահմանված կարգին, դրա ընթացքում տեղի ունեցող խոսքերին, գործողություններին և ժեստերին: Ժամերգությունը մի կողմից Աստծո ծառայությունն է մարդուն, որը, ի թիվս այլ բաների, հստակեցվում է Սուրբ Հոգուց ոգեշնչված քարոզով, խորհուրդների տոնակատարությամբ և օրհնությամբ, մյուս կողմից, ժամերգությունը նշանակում է մարդու ծառայությունն Աստծո առջև, որն արտահայտվում է երգով, աղոթքով և խոստովանությամբ:

Ժամերգությունը սկիզբ է առել Երրորդության Աստծո պատմական ինքնահայտնությամբ: Դրա նպատակն է հիշեցնել մեզ Աստծո այս ինքնահայտնության մասին՝ Հիսուս Քրիստոսի մեջ, բայց նաև այն ուղղակիորեն հասանելի դարձնել խոսքի և

խորհրդի միջոցով: Հետևաբար, ժամերգության առանձին տարրերը՝ քարոզը, խորհուրդների տոնակատարությունը և նվիրաբերումը, աղոթքը և օրհնությունը, կամայական չեն, այլ անհրաժեշտ են փրկության փոխանցման և ստացման համար:

Պատմության փոփոխության ընթացքում

Թե ինչ ձևով է տեղի ունենում և ինչպես է մանրամասն ձևավորվում ժամերգության ընթացքը, կախված է տվյալ ժամանակներից և դրանց անհրաժեշտություններից: Հետևաբար, հասկանալի է, որ ժամանակի ընթացքում փոխվում է ժամերգությունների արտաքին ձևը: Մինչ կաթոլիկ - առաքելական համայնքի ժամերգությունները և Համբուրգում սկիզբ առած վաղ առաքելական շարժումը ունեին բարդ պատարագային կառուցվածք, այսօրվա Նորառաքելական ժամերգությունը բնութագրվում է պարզությամբ և քարոզչության ու խորհուրդների վրա կենտրոնացմամբ:

Այստեղ օրինակ է բարեփոխված քարոզչական ժամերգությունը, որը առաքյալներ Ֆրիդրիխ Վիլհելմ Շվարցը և Ֆրիդրիխ Վիլհելմ Մենքհոֆֆը տեսել են Նիդեռլանդներում և ներ են դրել իրենց սպասարկած համայնքներում դեռևս 19-րդ դարի 70-ական թվականներին: Այս փոփոխությունները, որոնք այնուհետև ընդունվեցին բոլոր նորառաքելական համայնքների կողմից 19-րդ դարի վերջին, հիմնականում նպատակ ունեին բավարար ուշադրություն դարձնել առաքելական ծառայության համար անձանց վերանշանակմանը և Քրիստոսի անխուսափելի վերադարձի ուղերձին, և այն հնարավորինս պարզ տեղեկացնել: Ավելին, կային վայրեր, որտեղ մեր եկեղեցու վաղ շրջանում ժամերգություններ էին մատուցվում, և որտեղ նպատակահարմար չէր բարդ պատարագ մատուցելու համար:

20-րդ դարի ընթացքում Նորառաքելական ժամերգությունը գնալով պարզեցվեց մինչև այն աստիճան, որ նույնիսկ պատարագային ժեստերը և աղոթքների, օրհնությունների և խորհուրդների միջև տեսանելի տարբերությունը մեծ մասամբ վերացվեցին: Դա փոխվեց 21-րդ դարի առաջին տասնամյակում, որով մեր եկեղեցին- թեև զգուշավոր -հանգեց պատարագային վերաիմաստավորման: 2010 թվականին ներդրվեց ընդլայնված պատարագը, որը հիմնականում ազդեց Սուրբ Հաղորդության ընթացակարգի և օծման համար օգտագործվող ձևակերպման վրա:

Շնավորումը՝ Kenn/stock.adobe

Այս համատեքստում ոչ միայն վերագտնվեց «պատարագ» տերմինը, որը դեռ վերացվել էր 20-րդ դարի սկզբից ի վեր, այլև նոր հետաքրքրություն առաջացավ պատարագային հարցերի նկատմամբ, օրինակ՝ պատարագային իրադարձությունների աստվածաբանական նախապատմության և դրանց պատշաճ կատարման վերաբերյալ:

Առաքյալների ձեռքերում

Ժամերգության ծիսակարգը՝ ինչպես եկեղեցու կարգը, պարտադիր կերպով որոշվում է առաքյալների կողմից (առաքյալները՝ որպես «տնտեսներ», Նորառաքելական եկեղեցու դավանաբանություն, ՆԱԵԴ 7.4.1): Պատարագի ընթացքում ասված խոսքերը՝ ինչպես, օրինակ, Երրորդության անունով մուտքը, Տերունական աղոթքի ձևակերպումը, մեղքերի թողության և օծման բանաձևերը, ինչպես նաև պատարագային ժեստերը, պարտադիր են: Այս պահանջը անհրաժեշտ է, որպեսզի պարզ լինի, որ ժամերգությունների արարողությունները կամայական չեն և չեն համապատասխանում առանձին մարդկանց նախասիրություններին: Հավատացյալը պետք է վստահ լինի, որ ժամերգությունը կատարվում է առաքյալների հետ միասնության մեջ, և որ խորհուրդների օրինական կիրառումը չի կարող կասկածի տակ դրվել սուբյեկտիվ և կամայական փոփոխություններով և լրացումներով: Պետք է գիտակցել. պատարագի ընթացքում յուրաքանչյուր բառ և յուրաքանչյուր ժեստ նշանակալից է և կապված է մեր եկեղեցու վարդապետության և հավատքի հետ:

Կրկնվող պատարագային իրադարձությունները (օրինակ՝ Երրորդության մուտքը, մեղքերի թողությունը, օծումը և այլն) ծառայում են, ի թիվս այլ բաների, մարդկանց համար Աստծո մշտական և հուսալի հոգատարությունը հստակեցնելուն: Այսպիսով, ժամերգության այցելուները կարող են իրենց ապահով զգալ Աստծո անփոփոխ հավատարմության մեջ:

Սուրբ Հաղորդությունը կենտրոնում

Սուրբ Հաղորդության ծիսակարգը Նորառաքելական ժամերգության կենտրոնական մասն է կազմում:

Սուրբ Հաղորդության տոնակատարության ժամանակ Հիսուս Քրիստոսի ներկայությունը իր համայնքում ավելի է ուժեղանում, եթե մինչ այժմ հարություն առած Տերը հոգևոր կերպով է ներկա եղել ժամերգության ընթացքում, այժմ նա նաև իրական կերպով ներկա է՝ իր մարմնով և արյունով՝ Սուրբ Հոգու զորությամբ: Հետևաբար, հարություն առած Տերը ներկա է իր փառավորված մարմնով և իրեն նվիրում է իր համայնքին սրբազան ձևով:

Սուրբ Հաղորդության ծիսակարգը բաղկացած է երկու մասից՝

- Նախապատրաստական մաս, որը ներառում է մեղքերի խոստովանությունը և դրանց թողության հռչակումը: Այս մասն ավարտվում է զոհաբերության աղոթքով:
- Սուրբ Հաղորդության հիմնական մասը սկսվում է «Իսկ հիմա մենք տոնում ենք Սուրբ Հաղորդությունը» խոսքերով, այսինքն՝ հացի և գինու օծմամբ, որը խորհրդանշում է Քրիստոսի մարմնի և արյան ներկայությունը: Օծումից հետո տեղի է ունենում Հաղորդություն, այսինքն՝ հոգևորականների և համայնքի անդամների կողմից օծված նշխարի ընդունումը:

Մեղքերի թողության ճանապարհին

Կարճ խոսքով պետք է ընդգծել ապաշխարության և Սուրբ Հաղորդության նշանակությունը: Ապաշխարության մասին խոսելն անհրաժեշտ է ոչ բավարար ըմբռնումները շտկելու համար: Կարևոր է, որ ապաշխարության գործողությունը չհանգեցնի պատարագի ընթացքում պարզապես մի իրադարձության, այլ պարզ դառնա, որ ապաշխարությունը՝ որպես սեփական անկատարության և Աստծո շնորհից լիակատար կախվածության ճանաչում, ընդհանրապես քրիստոնեական հավատքի կյանքի անհրաժեշտ բաղադրիչ է:

ՆԱԵԴ 7.4.1-ում նշվում է. «Առաքելական ծառայությունը, որը քարոզում է հաշտություն» (Բ Կորնթաց 5:18-19), մարդկանց հորդորում է ապաշխարության և առաջնորդում նրանց դեպի Աստծո փրկչական գործը, որը կատարվել է Հիսուս Քրիստոսով»:

Հետևաբար, մեղքերի թողությունը տեղի չի ունենում ավտոմատ կերպով, այլ դրան կարող են հասնել միայն ապաշխարության միջոցով: Այս թեմայի վերաբերյալ հետևյալ պնդումները կարելի է գտնել «Մտքեր մեղքերի թողության մասին» ակնարկում (Հիմնական մտքերի հատուկ թողարկում, ՀՄ/ՀՀ 2/2015)՝

«Մեղքերի թողություն ստանալը պահանջում է ինտենսիվ նախապատրաստություն: Մենք պետք է՝

- անցնենք մանրակրկիտ ինքնաքննություն և գիտակցենք մեր սխալները,
- խոստովանենք մեր մեղքը Աստծո առաջ: Սա նշանակում է ոչ միայն ճանաչել մեր սխալները, այլ նաև մեր մեղքը.
- զղջանք: Մենք ցանկանում ենք արտահայտել մեր կյանքը շտկելու մեր վճռականությունը,
- վճռականորեն կանգնել մեր մերձավորի հետ հաշտության ուղու վրա»:

Զղջումն ու մեղքերի թողությունը Սուրբ Հաղորդությանը արժանի մասնակցության անհրաժեշտ նախապայմաններ են:

Ապաշխարության երգ և Տերունական աղոթք

Ապաշխարության երգը երգվում է նստած վիճակում, քանի որ այս համատեքստում նստած լինելը ինքնավերլուծության արտահայտություն

է: Հետևաբար, պետք է ուշադրություն նդարձնել այն բանի վրա, որ այնպիսի երգ երգվի, որում անդրադարձ կլինի մարդու մեղավորությանը և ապաշխարության անհրաժեշտությանը:

Եթե համայնքը պետք է լռության մեջ մնա, կարևոր է, որ նրանք նախ սովորեն, թե ինչի համար կարող է օգտագործվել այս լռությունը. օրինակ՝ Աստծո կամքին հակառակ կատարված մեղքերի համար ներում խնդրելու և ներելու իրենց պատրաստակամությունը ամրապնդելու խնդրանքով:

Տերունական աղոթքը համայնքն ասում է մեղքերի թողությունից և Սուրբ Հաղորդության օծումից առաջ, քանի որ Նորառաքելական ծիսակարգում այն հասկացվում է և՛ որպես սննդի աղոթք («Տուր մեզ այսօր մեր հանապազօրյա հացը») և՛ որպես ապաշխարության աղոթք («Ներիր մեզ մեր մեղքերը»):

Հոգևորականը համայնքին հրավիրում է միասնական աղոթքի. «Եկեք ոտքի կանգնենք այն աղոթքի համար, որը Տեր Հիսուսը սովորեցրեց մեզ»: Այն փաստը, որ Հիսուս Քրիստոսը իր հետևորդներին սովորեցրել է աղոթել, ընդգծում է այս աղոթքի նշանակությունը և պարտավորեցնող բնույթը: Նա, ով աղոթում է, աղոթում է Հիսուս Քրիստոսի հետ և նվիրվում է աղոթքի խնդրանքներն ու խոսքերը իր կյանքում իրականացնելուն:

Մեղքերի թողություն

Մեղքերի թողության պաշտոնական տեքստն այսպիսին է. «Ինձ ուղարկողի՝ առաքյալի անունից ձեզ եմ հայտնում բարի լուրը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ կենդանի Աստծո Որդու անունով, ձեր մեղքերը ներված են: Հարություն առած Տիրոջ խաղաղությունը ձեզ հետ լինի: Ամեն»:

Հոգևորականը նախ հստակորեն նշում է, որ մեղքերի թողության շնորհումը կատարվում է առաքյալի անունից և ուղղակիորեն կապված է առաքելական ծառայության հետ: Մեղքերը ներվում են Աստծո կողմից: Հայտարարությունը ծառայում է մեղավորին հավաստիացնելուն, որ Աստված ողորմած է և ներում է մեղքերը:

«Մտքեր մեղքերի թողության մասին» արդեն մեջբերված ակնարկում ասվում է. «Առաքյալը հայտարարում է ներում, բայց Աստված է ներում: Առաքյալների լիազորությունը մեղքերի թողության վերաբերյալ ավտոմատ ձևով չի գործում: Այնուամենայնիվ, միայն առաքյալի կողմից մեղքերի թողության հայտարարումը բավարար չէ մեղքերը լվանալու համար: Ներումը արդյունավետ է միայն այն դեպքում, եթե մեղավորը զղջում է և պատրաստ է ներել: Այն լիազորությունը, որով առաքյալները հայտարարում են մեղքերի թողությունը, էապես հիմնված է նրանց առաջադրանքի վրա՝ ճիշտ տեղեկացնել խոսքը և ճիշտ կատարել խորհուրդները: Մեղավորն ունի իր մեղքերի թողություն ստանալու վստահություն, եթե հավատքով վստահում է առաքելական պաշտոնի լիազորությանը: Առաքյալները գործում են որպես Քրիստոսի դեսպաններ, նրանց միջոցով հենց Հիսուս Քրիստոսն է, որ արդարացում է հայտարարում հավատացյալին» (ՀՄ/ՀՀ 2/2015): Ավելին, նշվում է. «Աստված կարող է ներել մեղքերը՝ անկախ պաշտոնից և եկեղեցուց: Այնուամենայնիվ, միայն նրանք, ովքեր ստացել են մեղքերի թողության հավաստիացում առաքելոց ծառայությունից, կարող են վստահ լինել, որ իրենց մեղքերը իսկապես ներված են»:.

Զղջումն ու մեղքերի թողությունը պարզապես նախապատրաստություն են Սուրբ Հաղորդության արժանապատիվ տոնակատարությանը: Կոմմյունիթիի հաջորդ հրատարակության մեջ երկրորդ մասը ցույց կտա, թե ինչու է պատարագը յուրաքանչյուր քայլափոխի ուղղված դեպի հանդիպման, միասնության և փրկության ճանապարհը:



Խմբագրական
Հրատարակիչ՝ Հելգե Մուչլեր, Իուբերլանդսշթրասսե 243, 8051 Ցյուրիխ/Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիծոֆֆ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ- Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Մեկ եկեղեցի, մեկ ոգի, նոր ղեկավարություն

Նոր առաքելական եկեղեցին ունի նոր գլխավոր առաքյալ: Հոգեգալստյան տոնին գործող Ժան-Լյուք Շնայդերը ձեռնադրեց իր հաջորդին՝ Հելգե Մուտչլերին: Եկեղեցու հարյուր հազարավոր անդամներ հետևեցին ուղիղ հեռարձակմանը Հարավային Աֆրիկայից:

Լուսանկարները՝ ՆԱԵ Հարավային Աֆրիկա

Եկեղեցին հանդես է գալիս որպես Քրիստոսի մարմին, որի անդամները ամբողջովին տարբեր են, բայց լավագույնս գործում են միասնական՝ սա էր Թաֆելզիգի (Քեյփթաուն) համայնքում անցկացված ժամերգության կիզակետը: Դրա համար հիմք հանդիսացավ Աստվածաշնչյան խոսքը՝ վերցրված Կորնթացիներին Ա 12:13-ից. «Քանզի մեկ Հոգով մեկ մարմին լինելու համարմենք մկրտվեցինք մենք ամենքս՝ հրեաներ, թե հեթանոսներ,թե ծառաներ, թե ազատներ, և բոլորս էլ այդ մեկ Հոգին խմեցինք»:

Մասնակիցները՝ թե՛ ներկաները, թե՛ ուղիղ հեռարձակմամբ դիտողները, ժամերգության ավարտին հուզմունքով դիտեցին, թե ինչպես է գլխավոր առաքյալ Շնայդերը ձեռնադրում իր հաջորդին, ապա գլխավոր առաքյալ Մուչլերը հանգստի է ուղարկում իր նախորդին:

Գլխավոր առաքյալ Շնայդերը միջազգային եկեղեցին ղեկավարում էր 2013 թվականից: Նրա պաշտոնավարումը հիմնված էր դավանաբանության վրա, որը մանրամասն մշակվել էր իր նախորդի՝ Վիլհելմ Լեբերի օրոք՝ որպես Նորառաքելական ուսմունքի առաջին համապարփակ շարադրանք: Գլխավոր առաքյալ Շնայդերի ղեկավարությամբ շրջանային առաքյալների ժողովը պարզաբանել է առկա հարցերը, մասնավորապես՝ պաշտոն հասկացության վերաբերյալ հարցը:

Նրա պաշտոնավարման շրջանը բնութագրվում էր եկեղեցուն նաև կազմակերպչական առումով փոփոխվող աշխարհին նախապատրաստելու և միջազգային համագործակցությունը ամրապնդելու անհրաժեշտությամբ: Այնուամենայնիվ, ուշադրությունը կենտրոնացած էր հավատացյալներին խոսքով ու գործով Հիսուս Քրիստոսի ուսմունքին համահունչ դարձնելու և Նրա վերադարձին նախապատրաստելու վրա: Գլխավոր առաքյալ Շնայդերը որոշ ժամանակ արդեն իսկ բացահայտել էր իր հավանական հաջորդին՝ մի առաքյալի, որը նախ 2021 թվականի նշանակվել էր Հյուսիսային և Արևելյան Գերմանիայի շրջանային առաքյալի օգնական: Նույնիսկ տվյալ շրջանային առաքյալն այդ ժամանակ չգիտեր, որ «իր օգնականը կդառնա հաջորդ գլխավոր առաքյալը»: Գլխավոր առաքյալը ակնարկեց դրա մասին Հանովերում 2025 թվականի օգոստոսին կայացած պաշտոնական արարողությունների ժամանակ:

«Ես երկար ժամանակ աղոթեցի, այո, պայքարեցի Աստծո հետ», - հայտնեց եկեղեցու առաջնորդը Հոգեգալստյան տոնին՝ առաքյալ Մուչլերին գլխավոր առաքյալի օգնական նշանակելուց, այդպիսով և նրան իր նշանակած հաջորդը անվանելուց կարճ ժամանակ առաջ: «Աստված պատասխանել է այս աղոթքին: Այսօր ես կարող եմ բացարձակ վստահությամբ և համոզվածությամբ հայտարարել, թե ում է Աստված ընտրել մեր հաջորդ գլխավոր առաքյալը լինելու համար»:

Հելգե Մուչլերը, ով ծնվել է Թյուբինգենում 1974 թվականին, ունի իրավաբանական գիտությունների դոկտորի աստիճան: Եկեղեցուն շուրջօրյա ծառայելուց առաջ նա եղել է Ստորին Սաքսոնիայի հարկային խորհրդատուների պալատի գործադիր տնօրենը: Նա իր առաջին պաշտոնական նշանակումը ստացել է 1994 թվականին, 2015 թվականին գլխավոր առաքյալ Ժան-Լյուկ Շնայդերը նրան ձեռնադրել է առաքյալ: Նա ամուսնացած է և երկու երեխաների հայր է:

Հելգե Մուչլերն արդեն իսկ հոգևոր շեշտադրում էր սահմանել 2025 թվականի Հոգեգալստյան ժամերգությանը: Իր քարոզում նա խոսել է այն մասին, որ Հոգեգալուստը «սրտի լեզվի սկիզբն է»: Սուրբ Հոգին բացում է մեր աչքերը Աստծո համար, Աստծո առաջ մեր սեփական արժեքի համար և մեր մերձավորի համար: Բաժան-բաժան եղած աշխարհում կարևոր է բարիք գործել և խաղաղություն հաստատել Սուրբ Հոգու զորությամբ:

Nac.today-ի՝ Նորառաքելական եկեղեցու միջազգային լրատվական պորտալի հետ հարցազրույցը առաջին պատասխաններ է տվել այն հարցին, թե ով է իրականում նոր առաջնորդը՝ նշանակումից անմիջապես հետո: «Սա հսկայական բան է», - ասել է Հելգե Մուչլերը իր կոչման մասին: «Ես ուրիշ ելք չունեմ, քան վստահել Աստծուն»: Հետևաբար՝ «Ես ընդունում եմ այս կոչը շատ հստակ ներքին «այո»-ով՝ հավատքով և վստահությամբ Աստծո հանդեպ»:

Նրա համար կարևոր է, օրինակ՝

- Հովվական խնամքը. «Ես այնքան կցանկանայի ..., որ առաջանար «հովվական խնամքի ցանկություն»: Որովհետև՝ «Հովվական խնամքը միաբանում է: Եվ որտեղ կա կապվածություն, այնտեղ սկսվում է երկնքի մխիթարությունն ու ուրախությունը»:
- Բազմազանություն. «Ծաղիկների գունագեղ մարգագետնի նման բազմազան կարող է լինել համայնքը : Եվ որքան գեղեցիկ է, երբ կարող ես ասել. «Ես տեսնում եմ քեզ, ես հարգում եմ քեզ, նույնիսկ եթե դու տարբեր ես: Որովհետև ես ինքս նույնպես տարբեր եմ մյուսից »:
- Երկխոսություն. «Բազմազանությունը գործում է միայն երկխոսության միջոցով: Երկխոսությունը տարբերությունների միջով միասին քայլելն է՝ առանց դրանք վերացնելու փորձի

Նոր գլխավոր առաքյալը նաև ծանոթ է հավատքի ճանապարհի վերելքներին ու վայրէջքներին. «Կյանքիս դժվարին շրջանում ես հեռացա Աստծուց և մեղադրեցի նրան: Սա որոշ ժամանակ շարունակվեց, իսկ հետո տեղի ունեցավ մի հրաշալի բան»: Մասնավորապես «Այս Աստվածը երես չթեքեց ինձնից, այլ հավատարիմ էր մնում իմ կյանքում: Ես լիովին հիացած էի այս Աստծով, նրա ողորմածությամբ… և դեռ հիացած եմ»:

Դիմանկարում՝ Հելգե Մուչլեր

Հելգե Մուչլերը ծնվել է 1974 թվականի օգոստոսի 8-ին Գերմանիայի Թյուբինգեն քաղաքում և երեք քույր-եղբայրների հետ մեծացել է Շվարցվալդի Ֆրոյդենշթադթ քաղաքում:

Դպրոցն ավարտելուց և քաղաքացիական ծառայությունն ավարտելուց հետո Հելգե Մուչլերը 1995 թվականից սկսած սովորել է իրավաբանություն Հաննովերի համալսարանում : 2003 թվականին ուսումը հաջողությամբ ավարտելուց և փաստաբանական ասոցիացիա ընդունվելուց հետո նա դարձել է Ներքին Սաքսոնիայի հարկային խորհրդատուների պալատի գործադիր տնօրեն: 2005 թվականին նա ստացել է իրավագիտության դոկտորի կոչում:

Հելգե Մուչլերը 2007 թվականից ամուսնացած է իր կնոջ՝ Անն Ջուլիետի հետ: Ընտանիքը երեխաների հետ ապրում է Ներքին Սաքսոնիայի նահանգի մայրաքաղաք Հաննովերում:

20 տարեկանում նա ընդունել է իր առաջին հոգևոր սպասավորությունը որպես ենթասարկավագ: Դրան հետևել են հետագա հոգևոր նշանակումներ և ձեռնադրություններ: 2015 թվականին գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը նրան 41 տարեկանում ձեռնադրել է առաքյալ:

Վեց տարի անց՝ 2021 թվականին, նա նշանակվեց Հյուսիսային և Արևելյան Գերմանիայի շրջանային առաքյալի օգնական: Այս պաշտոնում նա հոգևոր խնամք էր տանում ոչ միայն գերմանական համայնքներում, այլև Մեծ Բրիտանիայի, Իռլանդիայի, Հյուսիսային Եվրոպայի, Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի նորառաքելական քրիստոնյաների համայնքներում: 2025 թվականի Հոգեգալստյանը գլխավոր առաքյալի օգնական նշանակվելով՝ պատասխան տրվեց միջազգային եկեղեցու ղեկավարության իրավահաջորդության հարցին:

Տեղեկատու

01.07.2026	Կինշասա (Կոնգոյի ԴՀ)
03.07.2026	Դեմբա (Կոնգոյի ԴՀ)
05.07.2026	Կանանգա(Կոնգոյի ԴՀ)
16.08.2026	Հանաու (Գերմանիա)
23.08.2026	Քիշնև (Մոլդովա)
30.08.2026	Ռոյթլինգեն (Գերմանիա)
06.09.2026	Օլդենբուրգ (Գերմանիա)
12.09.2026	Բուդապեշտ (Հունգարիա)
13.09.2026	Վիեննա (Ավստրիա)
27.09.2026	Կարաչի (Պակիստան)

New Apostolic Church
International